Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի
«Շիրակի Նռանե մսուր- մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի
2025 թվականի սեպտեմբերի «1»-ի N 62-Լ հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Շիրակի Նռանե մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի՝ / տնօրենի ուսումնական գծով տեղակալ/, երաժշտության ղեկավարի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | **Թափուր պաշտոնի անվանումը** | **Հավակնորդին ներկայացվող պահանջները**<br>**(չափանիշները)** | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝** | **Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը** |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Շիրակի Նռանե մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության<br>1.Մեթոդիստ, տնօրենի ուսումնական գծով տեղակալ 0,25 դրույք /30000 ՀՀ դրամ աշխատավարձ/ | • **Որակավորման պահանջները**<br>• Հաստատության մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>• Հաստատության երաժշտության ղեկավարի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց):<br>• **Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության ղեկավարի, մեթոդիստի՝/ տնօրենի ուսումնական գծով տեղակալ/ պաշտոն զբաղեցնողները պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները. | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կա մ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել | 1) դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5) ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 2.Երաժշտության ղեկավար 0,5 դրույք<br>/60000 ՀՀ դրամ աշխատավարձ/ | ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները: | մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |
| | | **Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:** | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| 2 | **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | **ներկայացման ժամկետները** |
| | **Վայրը՝** ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ. Շիրակ, Գլխավոր փողոց 4-րդ փակուղի /մանկապարտեզ 44/3<br><br>**Օրը՝** 2025 թվականի **հոկտեմբերի 3** ժամը՝ 12:00 | Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզ, գ. Շիրակ, Գլխավոր փողոց 4-րդ փակուղի /մանկապարտեզ 44/3<br><br>**Հեռ. 077-38-89-56**<br><br>**Էլ. հասցե՝** mankapartez.shirak@mail.ru **;**<br><br>**Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:**<br><br>**Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978:** | | **2025 թվականի ի 1-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 26-ը ներառյալ** |
| | | **Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը08:30-16:30, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:**<br><br>**Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել akhuryan.am կայքերում**: | | |